սուրբ առաքեալն առնոյր զաշակերտսն եւ փութով հասանէր յաշխարհն Հայոց, առ թագաւորն Սանատրուկ, ի **գաւառին Արտազ**, ի **քաղաքագեւղն Շաւարշան**, **յապարանս արքունի**, ուր էին **հովոց գետինք** թագաւորացն Հայոց: Եւ քարոզէր անդ զբանն կենաց եւ առնէր նշանագործութիւն[ս] **ի դրան արքունի** [եւ] ի համաշխարհազարդ **բանակսն**...»; «Ես՝ Կիրակոս, էի աշակերտեալ Դաւթի միայնակեցի, բնակէի ի սնարս **լերին Սանատրուկ**՝ ի յայրին, մաւտ **ի Շաւարշան**... յայտնեցաւ ինձ ի քուն գիշերի յայտնապէս տեսիլ հրաշալի, ի մէջ **Սանատրուկ դաշտի**...»; «...եւ պատմէր /ոմն յՌշտունեաց/ սքանչելի տեսիլ... ի տեսլեան գիշերի աղջիկ մի գեղեցիկ տեսլեամբ եւ ասէր՝ Ես եմ Սանդուխտ, արի եւ գնա ի **գաւառն Արտազ**, ի **քաղաքագեւղն Շաւարշան**, ի **դաշտն Սանատրուկ**, ի **կայս հանգստեան** մերոյ...»[1]: Արդեօք ակնյայտ չէ՞, որ այս բնագրերի համաձայն՝ **արքայական ամառանոց** Շաւարշան քաղաքի (կամ քաղաքագիւղի) **դաշտը**, ուր նահատակուել էին Թադէոս առաքեալն ու իր սան արքայադուստր Սանդուխտը եւ որտեղից նրանց մասունքներն ինչ-որ ժամանակ անց բարձրացրել ու ամփոփել էին գետափից մէկ կմ արեւելք՝ իրօք «առապար» ձորալանջին կառուցուած Ս. Թադէի վանքում, հէնց վերջինից ներքեւ հոսող Զանգեմար գետի հովիտն էր:

Անշուշտ, այս նոյն **արտազեան** մայրուղով էր շարժուել (այլ ոչ թէ՝ Մարդաստան-Մարդուցայք գաւառով անցնող ուշմիջնադարեան Ղարաէյնի – Բայազէտ մայրուղով) Սասանեան արքայ Խոսրով Ա Անուշիրուանի (531-579) բանակը, ինչի մասին վկայութիւն է պահպանել Սեբիոս պատմիչը («...եկն ինքն արքայն Պարսից, կոչեցեալ Անուշ Ըռուան Խոսրով, հանդերձ **բազմութեամբ սպառազէն զաւրացն** եւ **փղաւք բազմաւք**, եւ ճանապարհ կալեալ **ընդ գաւառն Արտազու**՝ գնաց **ընդ Բագրեւանդ**, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ»)[2]: Թերեւս՝ նոյն մայրուղով պիտի 484 թ. Դուինից դէպի Հեր գաւառի Նուարսակ գիւղ իջնէր (պարսիկ զօրավար Նիխորի հետ բանակցելու) Վահան Մամիկոնեանը, ով ճանապարհին իր գնդերով դադար էր առել «ի գաւառն, որ կոչի **Արտազ**, ի գեաւղն, որ անուանեն **Եղինդ**». վերջինը ներկայիս Իրինդն է՝ Մակու քաղաքից 6 կմ հիւսիս-արեւելք[3]: Վերջապէս, կարծես թէ, այդ հին մայրուղին է ծառայել անգամ ասորեստանցի Սարգոն Բ-ին (Ք. ա. Ը դար), ով իր սեպագրում յիշում է

---

[1] Անանուն 2004, 6, 19-21: Այս վարքագրական երկի բնագիրն առաջին անգամ հրատարակել է դեռ Հ. Ղ. Ալիշանը (տե՛ս Սոփերք Հայկականք 1853, 9-75, 87-97):

[2] Սեբէոս 1939, 27 (գլ. Զ); Սեբէոս 1979, 68:

[3] Փարպեցի 1904, 164 (գլ. Գ.ղա, հմմ. «Մատենագիրք Հայոց», հտ. Բ, 2003, 2357): Նշուած ժամանակագրութեան համար տե՛ս Իւզբաշեան 2005, 118-162 («Պարսկի առն երկիր ո՛չ պագցուք» գլուխը):